

Վարժանք <Եռանկյան նշանավոր կետերը> թեմայից



Աշակերտի անուն,
ազգանուն

Դասարան

Ամսաթիվը

1. Պնդումներ եռանկյան տարրերի վերաբերյալ (1♦)

Եռանկյան տարրերի վերաբերյալ բերված պնդումներից որն է ճիշտ:

- Բոլոր պնդումներն էլ ճիշտ են:
- Եռանկյան բարձրության ցանկացած կետ հավասարահեռ է եռանկյան գագաթներից:
- Բոլոր պնդումներն էլ սխալ են:
- Եռանկյան կողմի միջնուղղահայացի ցանկացած կետ հավասարահեռ է եռանկյան երկու գագաթներից:
- Եռանկյան միջնագծի ցանկացած կետ հավասարահեռ է եռանկյան կողմերից:

2. Շրջանագիծ և անկյուն (3♦)

A անկյան կողմերը շոշափում են O կենտրոնով և R շառավղով շրջանագիծը: Որոշիր OA հեռավորությունը, եթե $\angle A = 90^\circ$ և $R = 31$ սմ:

$OA = \boxed{} \sqrt{\boxed{}} \text{ սմ:}$


3. Միջնուղղահայաց (4♦)

ABC եռանկյան մեջ BC կողմի միջնուղղահայացը AC կողմը հատում է D կետում: Որոշիր AD և DC հատվածների երկարությունները, եթե $BD = 33$ սմ և $AC = 44$ սմ:

$AD = \dots\dots\dots$ սմ,

$DC = \dots\dots\dots$ սմ

4. Եռանկյան կողմի վրայի հատվածները (6♦)



Հայտնի է, որ ABC եռանկյան AB և BC կողմերի միջնուղղահայացների հատման կետը ընկած է AC կողմի վրա: Որոշիր, թե ինչ երկարությամբ հատվածների է D կետը բաժանում AC կողմը, եթե $AC = 22$ սմ:

$AD =$ սմ,

$DC =$ սմ

5. Հավասարասրուն եռանկյան բարձրությունը (2♦)

ABC հավասարասրուն եռանկյան AB և BC կողմերին տարված բարձրությունները հատվում են M կետում: BM ուղիղը AC հիմքը հատում է N կետում: Որոշիր NC , եթե $AC = 50$ սմ :

Պատասխան՝ $NC =$ սմ